

## ՍՈՒՐԻԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆԶԵՒ 1946

ՅԱԿՈՐ ՉՈԼԱՔԵԱՆ

hagopcholakian@hotmail.com

Յօդուածը սուրիահայ դպրոցի օրինակով ցոյց կու տայ, որ հայ կեանքին մէջ կուսակցական քարոզչական աշխատանքներն ու շարժումները դպրոցական կեանքին մէջ անելի բուռն կ'երեւին յատկապէս օսմանեան սահմանադրութենէն ետք եւ անելի կ'ահագնանան ու կը վերածուին ծանր հակամարտութեան՝ Զինադադարէն անմիջապէս ետք, նոր գաղութի կազմաւորման շրջանին: Հայ ասանդական կուսակցութիւնները Սփիւոքի առաջին երեսնամեակին կը փորձեն զանազան պատճառաբանութիւններով, գլխաւորաբար կրթութեան մէջ «ոչ-յարանուանական», «ոչ-հայրենակցական», նոյնիսկ «ոչ կուսակցական» կարգախօսներով եւ սերունդին իրենց ըմբռնումով «ազգային դաստիարակութիւն» քամբելու պահանջով հասնիլ դպրոցին՝ առանձին դպրոցներու կամ դպրոցական ցանցերու գերատեսչութիւնները ձեռք բերելով կամ հոգատար ու հովանաւոր հայրենակցական, կրթական ու բարեսիրական միութիւնները եւ համայնքային մարմինները (թաղական խորհուրդներ, հոգաբարձութիւն, խնամակալութիւն) իրենց ազդեցութեան գօտիէն ներս առնելով կամ նորերը ստեղծելով: Ազգային իշխանութիւնները ամենախիստ միջոցներու կը դիմեն ազգային վարժարանները կուսակցականացումէ ձերբազատելու համար: Նոյնը կ'ընեն հայ անտարանական եւ կաթողիկէ գերատեսչութիւններ ունեցող դպրոցները: Այս պայքարը նոր բաժանումներու դուռ կը բանայ, ու տակաւ հայ կրթական կեանքը առաւել կամ նուազ չափով, ամբողջապէս թէ անուղղակիօրէն կը սկսի բաժնուիլ հայ երեք կուսակցութիւններու ազդեցութեան գօտիներու: Այս է պատկերը մինչեւ Մեծ հայրենադարձութեան աւարտը, այսինքն 1918-1948 տարիներուն:

Պարզ է, որ կրթական կեանքի կուսակցականացման սուրիահայ գաղութի այս պատկերը եզակի պատկեր մը չէր այդ տարիներուն համար. ան կը վերաբերի գրեթէ մեր բոլոր հին գաղութիւններուն, որոնք կրթական մեծ նախաձեռնութիւններ ունեցան եւ ստեղծեցին դպրոցական ցանցեր, ինչպէս Եգիպտոս, Լիբանան, Կիպրոս, Իրաք, Պարսկաստան, Պալեստինան երկիրներ եւ այլն:

1890ականներուն Բերիոյ (Հալէպի) թեմի առաջնորդական իրաասութեան տարածքին մէջ գտնուող Աղեքսանդրէթի եւ Անտիօքի շրջաններու հայկական բնակավայրերուն հասար եւ համաժողովրդական ընդունելութեան արժանացաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Աղափ (Կարապետ Թորոսարզիսեան) Հնչակեան Կուսակցութեան Լոնտոնի կեդրոնին իրահանգով 1891ին Կիլիկիա կու գայ ու կազմակերպական մեծ աշատանքներ կը յաջողի տանիլ յատկապէս Ալեքսանտրէթի ծոցի

հայկական շրջաններուն՝ Ալեքսանդրէթի, Պէլլանի եւ Չորբ Մարզպանի մէջ, ապա կ'անցնի Անտիոքի շրջան, ուր կեդրոն կը դարձնէ Սուետիոյ Խտրակէ գիւղը: Ան իր գործիչները կ'ուղարկէ Սուետիոյ եւ Քեսապի գիւղերը, մինչեւ Եագուպիէ եւ Ղենմիէ: Բազմաթիւ գիւղերու մէջ Հնչակեան Կուսակցութեան վարչութիւններ կը կազմուին<sup>1</sup>: Հնչակեան Կուսակցութիւնն էր, որ ամենէն առաջ ազգային գիտակցութիւնն եւ պարոմ արթնցուց դաւանական խնդիրներով այնքան բաժան-բաժան եղած ու իրարու դէմ թշնամական զգացումներ տածող համագիւղացիներուն մէջ, գործակցելու պատրաստակամութիւն ստեղծեց<sup>2</sup>: Այդ գիւղերուն մէջ կուսակցութեան անդամ էին հայ առաքելական քահանան, կաթողիկէ վարդապետը, բողոքական քարոզիչն ու պատուելին, եւ նոյնիսկ լատին օտարազգի հոգեւորականը (Մուսա Լեռան Խտրակէ գիւղ)<sup>3</sup>: Աւետարանական համայնքներու վերնախաւը անլի գգուշաւոր էր, որովհետեւ գրեթէ բոլոր համայնքներն ալ կը գտնուէին Պորտի առաքելութեան ամերիկացի միսիոնարութեան ուղղակի հսկողութեան տակ: Օտար միսիոնարութիւնները զգուշ էին համաժողովրդական: Սակայն ամեն տեղ նորագիրներ կային ուսուցչական կազմերէն ու աշակերտութենէն. անոնք Այսոսիանդերձ ավետարանական բոլոր կառոյցներունմէջ հնչակեան նորագիրներ աշխուժ գործունէութիւն կը ծաւալէին: Յիշենք, որ Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ գոլէճին մէջ հնչակեան մասնաճիւղի հիմնադիր կազմին մէջ էին հայերէնի ուսուցչապետ Ղազարոս Տիրատուրեանը եւ քեսապցի ուսանող Մովսէս Յովսէփեանը<sup>4</sup>:

1896ին, Չէթումի հնչակեան գործիչներու անձնատուութենէն ետք, օսմանեան իշխանութիւնները մէկիկ-մէկիկ սկսան հալածել հնչակեանները նաեւ Անտիոքի շրջանին մէջ: Նախ գրեթէ բոլոր հնչակեան գիւղերու մօտ տեղակայեցին ոստիկանատուններ, որոնք խիստ հսկողութեան տակ առին գիւղերու ելեամուտը<sup>5</sup>: Հալէպի բերդը լեցունցաւ պէլլանցի, սուետիացի եւ քեսապցի հնչակեաններով: Շատեր կըրցան ճամբայ գտնել ու փախչիլ Ամերիկա: Հնչակեանները կը հալածուէին ամեն տեղ եւ ամեն ժամանակ, ընդհուպ մինչեւ սահմանադրութեան նախօրեակին<sup>6</sup>: 1907ին Եագուպիէի Ազգային վարժարանի դուրսէն հրաւիրուած ուսուցիչը՝ Սահակ Ճանըզեան, կը բանտարկուի: Եագուպիէի Գրիգոր Քինյ, Գասսիսը (Երեցեան) կը յայտնէ, որ ուսուցիչը «Քսան յը մնաց բանտ անց քննուելու, առանց իր քովէն թուղթ մը կամ ռեւէ բան մը գրխուելու. բոլոր այս եղելութիւնը զրպարտութիւն է եւ թշնամական գործ»<sup>7</sup>: Ճանըզեան ամբաստանուած էր յեղափոխական գործունէութեամբ եւ արգիլեալ գրականութիւն ունենալուն համար:

1908ի օսմանեան սահմանադրութիւնը լայն առիթ ընձեռեց հայ քաղաքական կուսակցութիւններուն հրապարակային գործունէութիւն ծաւալելու: Այսոսիանդերձ չափազանց զգուշաւորութիւն մը կը տիրէ ժողովրդային մակարդակի վրայ, որովհետեւ գիւղական շրջաններու մէջ աատապետու-

թիւնը, այսինքն՝ կալուածատէր պարոնները, յայտնապէս կառավարութեան հետ գործած էր հնչակեաններու ձերբակալութեան շրջանին<sup>8</sup>: Սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս ետք Օրտոռի թուրքերը Քեսապ կու գան ու խող կոչուող հրապարակին մէջ տեղոյն հայոց հետ փող ու թմբուկով շուրջպար կը բռնեն ու կը տօնեն սահմանադրութիւնը: Գիտլի ասագներէն մէկը՝ Այսա Մանճիկ արդան չի թաքցնէր իր թերահաատութիւնը ըսելով. «Տեսնենք, թէ այս թմբուկին կոթը յետոյ որուն՝ զուլխի պիտի կոպրի»<sup>9</sup>:

Հակառակ այն փաստին, որ Ժողովուրդին մեծամասնութիւնը տակաին ինքզինք հնչակեան կը կոչէր, բայց չէր կրնար կազմակերպուիլ, որով հետեւ կուսակցութեան կեդրոնական վարչութիւններուն մէջ վերակազմատրուելու պատճառով նախ երկպառակութիւններ կային ու շրջաններու վարչութիւններով զբաղող չկար, երկրորդ՝ ապտուլիամիտեան բռնակալութեան տարիներուն նախկին կազմակերպիչները, դրսեցի եւ տեղացի, հեռացած էին, շատերը՝ գաղթած արտասահման: Կար նաեւ պահպանողական շրջանակ մը, որ առհասարակ արկածախնդրութիւն կը նկատէր կուսակցական գործունէութիւնը: Ուսանողական ու երիտասարդ մտաւորականութեան շրջանակներու մէջ կը կազմատրուէր նոր ուժ մը՝ Դաշնակցութիւնը: Ան կը գործէր նախ գաղտնի, սեղմ խմբակներով ու խստօրէն կարգապահ սկզբունքով: 1905ին ան ներկայութիւն էր արդէն Քեսապի մէջ: Հալէպի մէջ առաջնորդանիստ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից Ազգային Ներսէսեան Վարժարանի 1908ի շրջանաւարտներ Անանիա Եարալեան-Վիրաւորեանը եւ Յովհաննէս Տեւճեանը, 16-17 տարեկան, դաշնակցական էին: Եարալեան-Վիրաւորեանը (1890-1912) նոյն տարին Սուեիոյ «Փոթորիկ» մարտական խմբակի հիմնադիրներէն մէկն է, իսկ Յովհաննէս Տեւճեանը (Տեվճեան, Դեվճեան, գրական անունը՝ Արմէն Սեան, 1892-1976) յայտնի դաշնակցական գործիչ եղաւ, Գարեգին Նժդեհի գինակիցն ու քանտի ընկերը: Նոյն դպրոցէն է նաեւ Անանիայի հայրենակից եւ յայտնի դաշնակցական Մովսէս Տէր Գալուստեանը (Ա. Լէյլանի, 1895-1984): Սա ալ կը նշանակէ, որ Ներսէսեան վարժարանը կուսակցական շարժումներու յարմար միջավայր մը դարձած էր, մանաւանդ դաշնակցական նորագիրներ պատրաստելու գործին մէջ: 1909-11՝ երկու տարեշրջաններուն տնօրէն է Կարապետ Ապահունի, որ խաղաղ պաշտօնավարութիւն մը չ'ունենար: Կ'ըսուի, թէ ուսուցիչներ եւ աշակերտներ դպրոցը կը վերածեն (հնչակեան-դաշնակցական) կուսակցական հակամարտութիւններու կրկնի մը: Առաջնորդ հայրը դիտողութիւն կ'ընէ հոգաբարձութեան, որ 13 Յունուար 1910ի նիստին կ'արձանագրէ.

Առաջնորդ իօր կողմէ հոգաբարձութեանս դիտողութիւն եղած էր, որպէս թէ դպրոցի մէջ ուսուցչաց եւ աշակերտաց կողմէ կուսակցական խնդիրներ կը յուզուին եւ կազմակերպութիւններ կ'ըլլան:

ժողովս՝ տնօրէն Ապահունի էֆ(ենտի)է բացատրութիւններ ուզեց այս խնդրոյ մասին, որն ալ ապահովեց թէ կուսակցական կազմակերպութիւն կամ խնդիր վարժարանիս մէջ գոյութիւն չառնելու մասին ալ հարկ եղած կարեւոր ազդարարութիւնները ըրած է: Ժողովս գոհ մնաց տրուած տեղեկութիւններէն, սակայն եւ այնպէս որոշեց կրկին՝ նամակաւ տնօրէնութեան ներկայացնել խնդիրը, որ այս վերջինը ծայր աչաբարձ գտնուի եւ պաշտօնէից հարկ եղած գեկոյցը ընէ<sup>10</sup>:

4 Յուլիս 1911ին, հոգաբարձութիւնը եւ ուսումնական խորհուրդը խառն ժողովով մը՝ նախագահութեամբ Շահէ Վրդ. Գասպարեան առաջնորդին, ժողովականներու բացարձակ հաւանութեամբ Կարապետ Ապահունին կրկին տնօրէնութեան կը կանչեն: Բայց հանրութեան մէջ զանգուած մը կը շարունակէ ամբաստանել Ապահունին, իբրեւ կուսակցական գործիչ ու ներդի դնել հոգաբարձութիւնը: Հոգաբարձութիւնը 20 Օգոստոս 1911ին՝ քաղաքական ժողովին յղուած իր նամակին (127 թուակիր, ստորագրուած ատենադպիր Տոքթ. Ն. Գ. Իփէքեանի եւ ատենապետ Ա. Միրաքեանի կողմէ)<sup>11</sup> մէջ կը գրէ.

Նկատելով որ, տեղոյս ազգ(ային) գործեր, մասնաւորաբար կրթական գործը խել մը պաշխպօզուցներու ապօրինի եւ վատ արարքներով՝ բարոյապէս եւ նիւթապէս վատթարանալու շարին մէջ կը մտնեն, եւ առ հասարակ ազգ(ային) բոլոր գործեր ամլութեան եւ մասամբ անիշխանութեան կ'ենթարկուին, հոգաբարձութիւնս իր ներկայիս կու գայ զեկուցանել պատ(ուական) ժողովիդ թէ, յօգուտ կրթական գործին՝ կ'ուզէ ազգային ռեւէ շրջանակի ազդեցութենէ բոլորովին անջատ եւ լիազօր իրաւասութեամբ վարել իր վարժարանները: Արդ, եթէ պատ(ուական) ժողովդ մինչեւ 24 ժամ տոյն իրաւասութիւնը չհաճի տալ, ժողովս ինքզինքը իրաժարած պիտի նկատէ՝ ապագային բոլոր պատասխանատուութիւնը պատ(ուական) ժողովիդ վրայ թողլով:

«Իսել մը պաշխպօզուցները» արտայայտութիւնը կ'երթայ տնօրէնը ամբաստանող ճակատին, որ օր մը առաջ, 19 Օգոստոսին, «ի դիմաց 300 ստորագրողաց» թողուցիկ մը բաժներ էր քաղաքին մէջ: Մեզի յայտնի չէ, թէ ի՞նչ կուսակցութեան ծառայելու ամբաստանութեամբ կը մեղադրուի տնօրէնը եւ ի՞նչ կուսակցութեան շրջանակի մարդիկ են կրթական գործին միջամտող այդ «Իսել մը պաշխպօզուցները»: Բայց յստակ է, որ հոս կը գործէ հնչակեան-դաշնակցական հակամարտութիւն մը՝ դպրոցական կեանքին վրայ մենիշխանութիւն հաստատելու նպատակով: Հոգաբարձութիւնը քաղաքական ժողովին վերջնագիր կը ներկայացնէ յայտնելով որ «կ'ուզէ ազգային ռեւէ շրջանակի ազդեցութենէ բոլորովին անջատ եւ լիազօր իրաւասութեամբ վարել իր վարժարանները»: Քաղաքական ժողովը նոյն օրն իսկ հոգաբարձութեան կու տայ անոր խնդրած լիազօրութիւնը: 21 Օգոստոս 1911 թուակիր նամակով հոգաբարձութիւնը լուսաբանութեան կը կանչէ «ի դիմաց 300 ստորագրողաց» Յակոբ Ստեփանեանն ու ընկերները, կանխաւ անգամ մը եւս ընդգծելով տնօրէնին «օգտակար եւ արդիւնաւոր ծառայութիւնը»: Կը գրէ.

Հոգաբարձություն՝ նախորդ հոգաբարձության երկսեռ վարժարանաց տնօրենի մասին իր հրապարակային գոհունակությունը լսել է յետոյ մասնատորաբար իր մասին կրկին գոհացուցիչ տեղեկությունները ստանալէ վերջ, անցեալ Յուլիս 4 թուականաւ պատ(ուարժան) Ուսումնական խորհրդէ եւ արդի հոգաբարձութենէ կազմեալ խառն ժողովով մը, նախագահութեամբ Շահէ վրդպետ. Գասպարեանի, ժողովականաց բացարձակ հասանութեամբը զինքը կրկին տնօրէնութեան հրահրած է: Արդ՝ հոգաբարձութիւնս վստահ յիշեալին օգտակար եւ արդիւնատու ծառայութեանը՝ ամեն պատասխանատուութիւն իր վրայ առնելով՝ կը զեկուցանէ: Ձեզ թէ իրեն համար տնօրենի խնդիրը վերջնականապէս փակուած է:

Սակայն թէ պատ(ուարժան) բողոքարկուններ բաւարար չեն համարեր սոյն գոհացում, կը զեկուցանէ, թէ չէզոք անձնատուութիւններէ բաղկացեալ մասնախումբ մը կազմած է եւ պիտի հրահրէ յիշեալ 300 կրթասիրացը մի առ մի, որք պարտին ներկայանալ եւ նախ արձանագրել տալ իրենց անուններ եւ մականուններ մասնատու տետրակի մը մէջ, ապա իրաքանչիւր ոք իր կարգին խօսելով իր քանատու դիտողութիւնները՝ պիտի ստանայ իր օրինատու պատասխանը եւ ապա յիշեալ մասնախումբը իր վերջին քննութեանց արդիւնքը պիտի տեղեկագրէ հոգաբարձութեանս, որ նա ալ իր կարգին եզրակացութեան յանգելով՝ պիտի յղէ նորա արդիւնքը պատկ(ատեյի) Քաղաքական ժողովոյ առ ի կարգադրութիւն պարտ ու պատշաճին»:

Նամակը ի դիմաց հոգաբարձութեան Ազգ(ային) Ներս(էսեան) երկ(սեռ) վ(ա)րժ(արա)ն(ա)ց՝ ստորագրած են ատենադպիր Տոթթ. Իփէքեան եւ ատենապետ Միրաքեան<sup>12</sup>:

Ատենագրութիւնները սոսկ կ'արձանագրեն փաստը՝ առանց անուանելու դպրոցէն ներս գոյութիւն ունեցող ճակատները՝ դաշնակցակա՞ն, թէ՛ հնչակեան: Սակայն յստակ է, որ դպրոցին շուրջ ու մէջ ձեւատուած են կուսակցական հակամարտ կողմեր, որոնցմէ, գոնէ առերեսոյթ, հոգաբարձութիւնը կ'ուզէ անկայս գործել:

Ընդդիմադիրները լռեցնել կարելի չ'ըլլար: Գայթակողութեան վերջ տալու համար Ապահունին կը պահուի իբրեւ ռաուցիչ, իսկ այդ կրթաշրջանի (1911-12) տեսչութիւնը կը վարէ հոգաբարձութիւնը:

Ազգային քաղաքական ժողովի, հոգաբարձութեան եւ դպրոցական ատենագրութիւնները թէեւ բան մը չեն արձանագրած, բայց կարելի է ենթադրել, որ կուսակցական նորագիրներ ապահովելու համար դպրոցը ատկէ ետք եւս ամենէն խոցելի միջավայրը կը հանդիսանար:

1914-9՝ Ներսէսեան վարժարանը կը փակուի պատերազմի բերմամբ:

Պատերազմէն ետք, 1919ին վերաբացուած Հալէպի Ազգային երկսեռ Վարժարաններուն (Հայկազեան Վարժարաններ, նախկին Ներսէսեան) մէջ կրկին կ'երեւին կուսակցական նկրտումներ: Այս անգամ՝ ասելի բուռն, ինչպէս կ'երեւի Ազգային Քաղաքական ժողովին կողմէ 1920-1921ին դպրոցի մասին կատարած ատենագրութիւններէն եւ հոգաբարձութեան ուղղուած ու վարը բերուած նամակներէն: Ազգային իշխանութիւնները

հետամուտ են, որ կուսակցական-գաղափարական շարժումներ չթափանցեն դպրոց: Համար 558, 16 Յուլիս 1920 թուակիր նամակով քաղաքական ժողովը հետետեալը կը հրահանագէ Ազգային Երկսեռ Վարժարանաց հոգաբարձութեան. «Կուսակցականութեան դպրոցի մապաղ պարանենկութեան հոգիին վրայ ըրած աւերը շար լաւ ըմբռնելով ժողովս անհրաժեշտ կը նկարէ բացարձակապէս հեռացնել դպրոցի ուսանողութենէն ներս որեւէ կուսակցական մրայնութիւն, իսկ ասոր յարմարագոյն միջոցը կը նկարէ դպրոցէն ներս չընդունիլ այն բոլոր աշակերտր եւ աշակերտուիները, որոնք 18 փարեկանէն վար ըլլալով հանդերձ՝ կը պարկանին կուսակցութեան մը»<sup>13</sup>:

Դպրոցէն ներս կուսակցական որեւէ շարժում կասեցնելու նպատակով խստագոյն քննութեւէ կ'անցնին ուսուցչական պաշտօնի դիմող թեկնածուները: Ազգային Երկսեռ վարժարանաց հոգաբարձութեան՝ պաշտօնէից հետ 1920ականներուն կնքած պայմանագրութեան տպագիր յայտը իր հինգերորդ յօդուածին մէջ կ'ըսէ հետետեալը.

... Բացարձակապէս արգիլեալ է դպրոցէն ներս կուսակցական փրոփականտ մղել, երկսեռ աշակերտութեան ուշադրութիւնը ուղղակի եւ կամ անուղղակի միջոցներով կուսակցական հրատարակութեանց հրափրել, կուսակցական ռեւէ խմբակցութեան անդամակցիլ գործօն անդամի հանգամանքով, կուսակցական գիլաւներու մէջ եւ կամ դուրսը կուսակցական պայքար մղել, կամ յարակից նիւթերու շուքք բանախօսութիւններ ընել, Ազգային վարչութեան մարմիններու դէմ հրապարակային մաքառումներու մասնակցիլ, ըլլալ ժողովներու, ըլլալ մամուլի մէջ, նոյնպէս դպրոցին վարչական ներդաշնակութիւնը խանգարող ռեւէ քալլ առնել:

Արդէն յստակ է, որ կուսակցութիւնները ազգային իշխանութիւնները ձեռք բերելու համար քարոզչական գործունէութիւն կը ծաւալէին գրեթէ ամէն տեղ, քայց մանաւանդ կրթական հաստատութիւններէ ներս: Կը թուի, նոյնիսկ, որ ազգային վարչութեան որոշ մարմիններ պարբերաբար կ'ենթարկուէին այդ տրամադրութիւններուն: Այսպէս, հոգաբարձութիւնը պաշտօնապէս կը մասնակցի 28 Մայիս 1921ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետութեան տարեդարձի տօնակատարութիւններուն, այն ժամանակ երբ գաղութին ու գաղթականութեան մէջ կուսակցական հակամարտութեան ալիք մը կ'ահագնանար: Բերիոյ թեմի քաղաքական ժողովի նախագահ եւ առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քիւն, Եսայեան նոյն օրն իսկ հոգաբարձութեան ուղղուած նամակով մը կը դատապարտէ անոր մասնակցութիւնը գրելով. «Ժամանակին եւ պարագայից ծայր ասպրիճան փափկութեան համապարասխան չափ մը գծելով մենք որքան զգուշատր ընթանալ կրնայինք՝ հոգաբարձութիւնդ նոյն համեմարութեամբ չափազանցութեան փանելու ձգարում մը ցոյց փրաւ: Դրօշակով եւ ժապաւէտով, նուագով, նուագախումբով, ցոյցերով միայն Ազգին փունը քանդելու պարզմտութեամբ չմեղադրուելու համար ոգի ի բոհն աշխարհ-

լու (ենք) ճիշդ այս ժամանակին: Մի քանի պարզամիտ եռանդուներու թելադրութեամբ Ազգին ապագան զոհելու, վարժարանը վրանագելու ո՞վ իրաւունք ունի»<sup>14</sup>:

Յստակ է արդէն, որ հոս «մի քանի պարզամիտ եռանդուներ»ը դաշնակցական երիտասարդներ են:

Բերիոյ թեմի ազգային վարչութեան քաղաքական ժողովը ստիպուած էր ծայրայեղ «ժամանակին եւ պարագայից ծայր աստիճան փափկութեան համապատասխան» զգուշութիւն ցոյց տալ, հետեւեալ պատճառներով.-

1.- Հայ գաղթականութիւնը լրիւ անպաշտպան վիճակի մէջ էր ոչ միայն Հալէպի, այլեւ ամեն տեղ Սուրիոյ մէջ՝ Տէր Զօր, Դամասկոս, Քեսապ:

Անզիական զօրքը Տէր Զօր կը մտնէ Յունուար 1919ին եւ օգտակար կ'ըլլայ վերապրող հայերը Հալէպ ուղարկելուն: Որբահաւաքի եւ հայահաւաքի գործը մեծ թափ կը ստանայ: Արաբները հաշտ աչքով չեն նայիր հայոց նկատմամբ անզիացիներու ցուցաբերած հոգատարութեան: Անզիացիներու հեռանալէն ետք արաբները քաղաք կը խուժեն. կը քանդեն նաեւ հայ կաթողիկէ եկեղեցին: Ֆրանսական բանակը քաղաք կը մտնէ 1920ի գարնան<sup>15</sup>:

Հալէպի մէջ 18 Փետրուար 1919ի առաւօտուն կատարուած հայոց ջարդին մասին Ատանայի *Կիլիկիա* թերթի մասնաւոր թղթակիցը Հալէպէն կը գրէ. «Յաւալի կորուստներ ունեցանք դարձեալ: Պաշտօնական 46 սպանեաւոր են 85 վիրաւոր կայ, բոլորն ալ հայ: Զարդը կը սկսի Ճումա Բազարէն, ուր ոսփոյկաններ եւ զինուորներ կը դեկավարեն ջարդարար խուժանը: Ժամը 10-ին միայն անզիական եւ ֆրանսական շրջանակները շարժեցան եւ թոյլ չբոսին, որ ջարդն անլի ծաւալի»<sup>16</sup>: Մէկ-երկու ժամու ընթացքին յարձակումներ տեղի կ'ունենան հին քաղաքի տարբեր մասերուն վրայ՝ Պապ էլ-Ճնէյնէի, Քապթալ Հարամիի, Պապ էլ-Նասրի, նախկին զօրանոցի եւ Աքապէ թաղի հայկական որբանոցին վրայ: Երկու օր ետք նոյն թերթը կը յայտնէ, որ եղան 51 սպանեալ, շուրջ 100 վիրաւոր եւ անհետ կորածներ<sup>17</sup>: Կը կազմուի նախաքննիչ ատեան մը, որուն մաս կը կազմեն նաեւ երկու հայեր: Երեք հոգի կախաղան կը բարձրացուին, շուրջ 100 ուրիշներ կը բանտարկուին, որոնք բանտէն փախչելու առթիւ կը սպանուին, իսկ ողջերը կ'աքսորուին Սուտան: Այդպէս ալ հնարաւոր է'ըլլար բուն հրահրողները երեսն հասնել. «Մի խօսքով. անզիացիները գանազան միջոցներով ոչնչացրին այն բոլոր վկաներին, որոնք իրագել էին Հալէպի հայկական կոփորածի ներքին ծայրերին»<sup>18</sup>: Ասիկա անվստահութիւն կը ստեղծէ հայոց մէջ, որոնք կը լքեն ամեն ինչ ու Կիլիկիա կ'ուզեն ներգաղթել, նոյնիսկ Հալէպի որբանոցէն փախչողներ կ'ըլլան: Հալէպի մէջ կը դադրին *Տարագիր* եւ *Հայ Ձայն* թերթերը եւ մշակութային ամեն ձեռնարկ: Միւս կողմէ՝ կը ձեւաւորուի զինեալ պաշտպանութեան գաղափարը. *Կիլիկիա* անդրադառնալով Հալէպի ջարդին կը գրէ. «Ասիկա դաս մըն է հայ ժողովուրդին համար, թէ Համաձայնական ուժերու ներկայու-

թիւնն անգամ բաական չէ պահպանելու անոր ապահովութիւնը, առօրեայ խաղաղ կենսը»<sup>19</sup>:

Քեսապ հասած վերապրողներ, շուրջ 2000 հոգի, անգամ մը եւս ծանօրեղն վտանգուած էին, որովհետեւ ֆրանսական իշխանութիւնները տակաւին չէին կրցած թափանցել շրջան: Ֆրանսական ուժերը Լաթաքիոյ եւ Ճսըր Շուղուրի ու Իտլիպի միջեւ եւ անկէ մինչեւ Անտիոք, տիրութիւն ընել չկրցան շրջանի մը համար, որովհետեւ հոն սկսան բռնկիլ արար հայրենասէրներու ապստամբութիւնները, որոնք կը ղեկավարուէին շէյխ Սալէհ էլ-Ալիի (Լաթաքիոյ շրջան) եւ Իպրահիմ Հանանոյի (Անտիոքի եւ Հալէպի շրջան) կողմէ: 1919 Յունուարին անկախ պետութեան համար պայքարի ելած Համասուրիական Խորհրդարանական Ժողովի ներկայացուցիչ Սուպիի Պարաքաթ, Ռուհի Ջամպաթի գիւղին մէջ, հիախս-արեւմտեան Սուրիոյ բոլոր ղեկավարներու համաժողովի մը ընթացքին, ապստամբութիւն յայտարարեց Սուրիոյ մէջ: Միւս կողմէ, տիրող խառն կացութենէն օգտուելով, Անտիոքի շրջանի թուրքերը հրաժարած էին շրջանի միւս ազգերուն նկատմամբ Ձինաղաղարէն անմիջապէս ետք իրենց ունեցած սիրալիր ու հաշտ վերաբերմունքէն եւ կրկին ոտքի ելած: Անոնք, առեղծուած զինակցելով արաբ հայրենասէրներու պայքարին, փաստօրէն, կ'ուզէին իրենց գերիշխանութիւնը հաստատել Լաթաքիայէն հիախս տարածքին վրայ: Հաքքի եւ Ասիմ պէլերու ղեկավարութեամբ չեթէական խումբեր կազմած էին եւ ահուսարսափ կը տարածէին շրջակայ ալեւի եւ յոյն բնակչութեան վրայ: Ասոնցմէ հետզհետէ կը բաջալերուէին յատկապէս Պալիրի եւ Պունճաթի (Քեսապի շրջանի արեւելեան եւ հարաւային շրջանները) թուրքերը: Թուրք հրոսակախումբերը, փաստօրէն, տէրն էին Անտիոքէն մինչեւ Լաթաքիա երկարող տարածութեան ու իրենց որջը դարձուցած էին Քեսապի մօտիկ Օրտու աանը: Քեսապական վերջին յարթանակներէն յղիացած նախկին բանակայիններ եւ սպաներ անցած էին ասոնց գլուխը եւ Օրտուի մէջ կազմած «Ճեպէլ Աքրա Ֆելիպ Ատէ Քոմանտանը» (Ճեպէլ Աքրայի արտակարգ հրամանատարութիւն) անունով զինուորական մարմին մը<sup>20</sup>: Հարաւի ալեւիները նոյնպէս ծանր պայմաններու տակ էին: Թուրք աղաներու հրոսակախումբերը մտած էին ալեւի բնակավայրերը, սպանած շատերը, կողոպտած ու կրակի տուած անոնց տուները: Ալեւիներէն շատեր, հանդերձ ընտանեօք, ապաստանած էին Քեսապի հայոց մօտ: Նոյն օրերուն՝ Օրտուի արաբախօս յոյներու փոքրիկ գաղութն ալ ամենօրեայ սարսափի մէջ կ'ապրէր: Յոյները Քեսապ ապաստանիլ կ'ուզէին: Քեսապի 70-80 հոգիները զինեալ խումբ մը գնաց Օրտու եւ բոլոր յոյները՝ շուրջ 60 հոգի կազմող 20 ընտանիք տեղափոխեց Քեսապ: Ասոնցմէ ոմանք յետագային մնայուն կայք հաստատեցին շրջանին մէջ: Այդ ամիսներուն Քեսապ ապաստանեցան նաեւ Արֆալի հայ գիւղին վերապրողները: Քեսապի Ազգային Միութիւնը պետական իշխանութեան մը բացակայութեան պարագային կազմակերպեց Քեսապի ապահովական, տնտեսական,

կրթական եւ վերապրողներու տեղատրման հարցերը: Կիլիկիայէն Քեսապ հասած քեսապցի լեզոնականները՝ Մովսէս Շահպազեանի ղեկավարութեամբ հաստատեցին զինուորական իշխանութիւն: Քեսապցիք քանիցս ետ մղեցին Օրտուի կողմէն եկող վտանգները, եւ, Օգոստոս 1920ին, Ս. Աստուածածնայ տօնին օրը, Քեսապը պատժելու ելած մեծ ամբոյս մը Վարի Պաղճաղազ գիւղի մատոյցներուն առջեւ պարտութեան մատնեցին ու քշեցին հեռուները<sup>21</sup>:

Շուտով վրայ պիտի հասնէին Դամասկոսի հայ գաղթակայաններուն վրայ յարձակումներն ու քանդումը...: 1924-1925 տարիներուն ֆրանսական իշխանութիւններուն դէմ Դամասկոսի խլրտումները մեծապէս կ'ազդեն հայ գաղութին վրայ: 18 Հոկտեմբեր 1925ին ֆրանսական զօրքերը կը քաշուին կայազօրները: Ապստամբութեան մասնակիցները կը մտնեն Քատէմի քեմիք, ուր կը սպանուին 50 հայեր: Կը թալանուին Քատէմի, Պապ Շարքիի եւ Սուֆանիէ հիւղաւանները, Պապ Մուսալլայի եւ Մէլտանի բոլոր հայ խանութները<sup>22</sup>: Քատէմի հիւղաւանը գետնի հաւասար կ'ըլլայ: Ս. Սարգիս եկեղեցոյ կից Պապ Շարքիի հիւղաւանին վրայ վտանգը անելի կ'երկարի<sup>23</sup>: Աղէտեալ շրջաններէ շատ հայեր կ'ապաստանին Պէրյութ, ուրիշներ՝ կը տեղատրուին Պապ Թումայի իրենց յատկացեալ նոր վայրին մէջ եւ այլ վայրեր: Ղոնիւնն ու կորուստները անգամ մը ետ կը ցնցեն հայերը. Սահակ Բ. կաթողիկոս կը գրէ. «Դժբախտաբար հոգեւարտու Կարմիրի շրջանը ամբողջացած չէ եղեր: Դամասկոսի արիւնոյր պապահաւորը նոր զոհերնու հետ նոր կորուստներն ու որբերնու շարաններ սպեղծեց, մեծաւ մասամբ Պէրյութ ապաստանած»<sup>24</sup>: Պէրյութի մէջ կը կազմուի **Համազգային Կարօտելոց Յանձնաժողովը**, որուն անմիջապէս կը մասնակցին կաթողիկոսը, ՀԲԸՄը, Երուսաղէմի պատրիարքարանը, կաթողիկէ եւ անտարանական մարմինները<sup>25</sup>: Այս դէպքերուն հետեանքով կը ստեղծուի քաղաքական եւ տնտեսական ճգնաժամ. հայոց մօտատրպապէս կէտը կը ձգէ կը հեռանայ քաղաքէն:

Դէպքերուն հակահայ տրամադրութիւններ կ'երեւին: Արաբ ազգայնականներն աջքին հայերը կը նկատուին ֆրանսական իշխանութեան հովանաւորեալները: Դամասկոսի հայոց դէմ կատարուած այս արարքները բնաւ կապ չունէին տիրոջներու ապստամբութեան հետ: Ընդհակառակը՝ շատ հայեր Դամասկոսէն փախչելով ապաստան գտած էին հարաւի տիրոջի բնակավայրերուն մէջ, ուր արդէն հայկական համայնքներ ձեւարուած էին: Կ'արձանագրուի, որ «Տիրոջները ոչ մէկ ժամանակ չեն տեղած գաղթականները հայ ըլլալուն»<sup>26</sup>: Կը տեղեկացուի, որ Ճեպէլ Տրիպի Բիւմէ գիւղին մէջ կան 22 հայեր, եւ թէ ուրիշներ ալ եկած են հոն ապաստան գտնելու<sup>27</sup>: Լրիւ անկախութեան ձգտող սուրիացիները հայոց դէմ զրգոյքը շատ դիւրին պիտի ըլլար եւ համոզել, որ հայերը գաղութաբար զօրքերուն դրածոներն են Սուրիոյ մէջ: Իսլամ խումանը հայոց հիւղաւաններուն վրայ

մղելը բացայայտորեն օսմանեան նախկին ուժերու սադրանքն էր այդ պատեհ առիթին:

Հալէպէն, Սուրիոյ տարրեր գաղթակայաններէն ու տարագրութեան ճամփաներէն Կիլիկիա ներգաղթը կը սկսէր 1918ի վերջաւորութեան, Զինադադարէն անմիջապէս ետք: Տունդարձը սկզբնապէս ունէր զուտ տարերային եւ անհատական երեսոյթ: Շուտով՝ Սուրիոյ մեծ քաղաքներուն մէջ վերապրողներ հայրենակցական հիմունքով մէկտեղուեցան: Ասիկա յատկապէս երեւցաւ Հալէպի ու Դամասկոսի մէջ: Ասոնք ֆրանսական զօրքերու առաջնորդութեամբ կը վերադառնային հայրենիք: Ֆրանսան կը քաջալերէր ներգաղթը: Նշանակուած էր ներգաղթի տնօրէն, յանձին թղտնէլ Քլունքոսի: Միջգաւառական Միութիւնը այս գործին մէջ երեսոյղ չարաշահումներ ու բողոքներ նկատելով՝ կ'առաջարկէ իր գործակցութիւնը, եւ գործը առաջ կը տարուի առանց գեղծումներու:<sup>28</sup>

Մինչեւ 1919ի վերջաւորութեան, մօտ 150.000 հայեր վերադարձած էին Կիլիկիա, որոնց 60.000ը՝ Ատանա, 12.000ը՝ Չորք-Մարզպան, 8000ը՝ Հաճըն, 3-4000ը՝ Տարսոն, 2-3000ը՝ Մերսին եւ այլուր: 50.000 հայեր հաստատուած էին Մարաշ, Այնթապ, Զեյթուն: Կիլիկիա դրկուած էին 10.000 հայ որբեր:<sup>29</sup>

Տունդարձը կը կատարուէր ցամաքի ու ծովու ճամբաներով: Ատանայի մէջ կազմուած Ազգային միութեան մասնաճիւղեր սկսան գործել գրեթէ բոլոր ազատագրուած շրջաններուն մէջ: Ասոնք կը կազմակերպէին վերադարձողներուն տեղաւորման, ապրուստի ու ապահովութեան խնդիրները: Այսուհանդերձ, բազմահազար վերապրողներ ցրուած կը մնային Սուրիոյ տարրեր շրջաններուն մէջ. անոնք կամ փրկութեան կը սպասէին, կամ ալ համակերպած էին իսլամանալու գաղափարին: Բայց իրադրութիւնը Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ յի էր վտանգներով, Կիլիկիոյ ճակատագիրը անյայտ կը մնար: Երկրորդ գաղթականութեան մը վտանգը դուռին առջեւ էր...:

Հայ կեանքին մէջ, յատկապէս Քեսապ եւ Մուսա Լեռ, դեռ 1919էն ծայր առած էին եղբայրասպան կռիւներ ու ամբողջ տասնամեակի մը ընթացքին զոհեր խլած հակամարտ կողմերէն: Ասոնք սկզբնապէս ունենալով դասակարգային (աատատիրոջ եւ շուկայի խափն միջեւ) ու յարանուանական (բողոքական-լուսատրչական) բնոյթ՝ հետզհետէ ահագնանալով ստացած էին կուսակցական հակամարտութեան կերպարանք՝ խլելով շուրջ հինգ տասնեակի չափ երիտասարդ կեանքեր, ու վտանգ կար *դերորդ-ահաբեկչութիւնը* տարածելու ամբողջ գաղթաշխարհին մէջ: Այդ բախումները Քեսապէն կը խլեն 27, իսկ Սուետիայէն՝ 32 զոհ:<sup>30</sup>

Քեսապի եւ Սուետիոյ այս եղբայրասպանութիւնը կ'այլեկոծէ ամբողջ հայութիւնը: 10 Սեպտեմբեր 1921 թուակիր իր տեղեկագիրին մէջ Արշակ Զօպանեան հետեւեալ հաստատումը կը կատարէ. «Կիլիկեան հայութեան մեծագոյն խոցերէն մին է կուսակցական պայքարը, այլանդակ ու անմիդ

ծայրայեղության մը հասած... որ ֆրանսացոց եւ թուրքերուն մօր կը խայտառակէ եւ կը վարկաբեկէ հայութիւնը: Այդ չարիքին առաջըը առնելու համար Ազգ. Պատուիրակութիւնը ջանալու է ընել ամեն ինչ որ կարելի է»<sup>31</sup>:

Սահակ Բ. կաթողիկոս Իսապայեան Փարիզի Ազգային Պատուիրակութեան նախագահ Գարիիէ Նորատունկեանին յլած 5 Մայիս 1922 թուակիր նամակին մէջ կը գրէ.

Սուեւոյ մէջ ալ շփոթութիւնը անպակաս են. թշնամիէն ազատուող եւ հերոսի անուն վաստակող ժողովուրդը հիմա զիրար սպանելու քաջագործութեան մէջ են, Հաճի Հապիպի եւ Պիթիաս իրարու դէմ զինուած, երկու երիտասարդներ Հաճի Հապիպիէն սպանուած, փոխվրէժի համար անխուսափելի է նոր քախուսը. պատուիրակութիւն մը դրկեցի, որ աշխատի հաշտեցնել եւ զենքերը վար դնել: Ինչ կը մնայ ըսել օտար թշնամիին, երբ մենք ալ [զիրար] բնաջնջելու կ'աշխատինք: Քեասալ ալ վարդագոյն, արինագոյն է ըսել պիտի ուզեն, հոն միջցեղային կոյնն ու ոճիրը անպակաս են: Պատուիրակութեան իրահանգեցիւնը, որ Քեասալ հանդիպի եւ հաշտարարական դերը շարունակէ հոն: Իշխանութեանց անտարբերութիւնը կասկած կու տայ, թէ կ'ախորժի ներքին պառակտումներէ»<sup>32</sup>:

Այս պարագային՝ իշխանութեան մասին ակնարկը կ'երթայ ֆրանսական իշխանութիւններուն:

- Քեասալի մէջ, զինուորական իշխանութեան հրամանատար Մովսէս Շահպազեանը (Շահպազ), որ կը նկատուի յետտունդարձի՝ Քեասալի տարբեր համայնքներու ներկայացուցիչներէն կազմուած Հայ Ազգային Միութեան<sup>33</sup> շրջանակին մէջ ամենէն հուսասարակչողուած ու գիտակից անձնատրութիւնը, կը գրէ. «Եղբայրասպան այս բախումներն ու կոհիւները դադրեցնելու եւ անոնց վերջ տալու ամեն միջոց ապարդիւն մնաց: Պէտք է խոսքովանիլ թէ յիշեալ անիմաստ վէճերէն ու պայքարներէն շարք տուեցին Քեասալի ժողովուրդը կամ երկու կողմերը միանգամայն»<sup>34</sup>:

- Հայաստանի Հանրապետութեան անկումին եւ Խորհրդային Հայաստանի հաստատման փաստերուն հանդէպ հակադիր կեցուածքներ խմորուած էին հայ գաղթականներուն մէջ: Ոմանք Հայաստանի անկախութեան անկումին մէջ դաշնակցական տիքթաթուրան կը նկատէին մեղաւոր, իսկ Հայաստանի գոյատեւումը՝ խորհրդային ուժի ներկայութիւնը: Հետեաբար Մայիս 28ի տօնակատարութիւնները այդ պայմաններուն մէջ կուսակցական բովանդակութիւն ունէին, կը դիտուէին իբրեւ անկախութեան գաղափարը շահարկումի ենթարկող «զլուպ»ային (իմա՝ ակումբային-կուսակցական) գործունէութիւն, ու կրնային անի պատակտիչ ըլլալ:

- Ազգային իշխանութիւնները ոգի ի բոլին կ'աշխատէին, որ ազգային վարժարանները չկուսակցականացուին. հայեցի կրթութիւնն ու ազգային դաստիարակութիւնը կուսակցականութեան վտանգէն ու մենաշնորհէն հեռու պահելը համազգային շահերէ կը բխէր: Այդպէս կը մտածէին հայ

թեմական իշխանությունները, այդպես կը տեսնէին անոնք իրադարձութիւնները այդ «քրիթիկական ժամանակ»ներուն:

Եթէ առժամապէս կարելի եղաւ կասեցնել կուսակցութիւններու մենիշխանութիւնը դպրոցական կեանքէն ներս, միա կողմէ սակայն կարելի չեղաւ խափանել ազգային եւ միութենական վարժարաններէ ներս կուսակցական նկրտումներով կատարուած դպրոցական եւ աշակերտական բաժանումները:

1921ին Հալէպի Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ (առաջնորդանիստ Ա. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից) կը հիմնուի Կիլիկեան Գաղթային Միութեան (ԿԳՄ) վարժարանը, որ փաստօրէն ոչ թէ եկեղեցւոյ թաղական խորհուրդին, այլ միութեան վարչութեան հսկողութեան տակ էր: Այնուհետեւ կը բացուին միութենական, հայրենակցական ու գաղթային այլ վարժարաններ եւ: Դպրոցներու թիւը տասնեակներով կը բազմապատկուի Սուրիոյ բոլոր գաղթային վայրերուն մէջ: Բերիոյ թեմի ազգային իշխանութիւնները կը հրաւիրեն բոլորը մտնելու ազգային վարժարաններու ցանցին մէջ եւ մտնելու ազգային վարչութեան Ուսումնական Խորհուրդի հսկողութեան տակ: Բերիոյ թեմի 1928ի գաւառական ժողովի ընտրութիւններէն ետք Ազգային վարժարաններու կազմին մէջ կը մտնեն 20 վարժարան՝ 4775 աշակերտով<sup>35</sup>: հայրենակցական վարժարանները կամաց-կամաց կը փակուին՝ միանալով տեղւոյն վրայ գործող ազգային վարժարաններուն, ինչպէս Հալէպի մէջ Չարսանճաքի Հայրենակցական Միութեան (1922-1928), Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան (1923-1927), Եղեւսեցւոց Համիտիէի (1923-1933) եւ Սուլէմանիէի հիւղաաններուն (1923-1933) վարժարանները: Նոյնը կ'ընեն 1929ին Կիլիկեան Կաթողիկոսութեան իրաստութեան անցած Դամասկոսի ու 1932ին առանձին թեմի վերածուած Անտիոքի առաջնորդարաններու սահմաններէն ներս գործող ծխական ու գաղթային վարժարանները<sup>36</sup>:

1919-24՝ տեղական Ազգային Միութիւններու (Քեսապ, Սուեփա) հսկողութեամբ գործող անտարանական եւ առաքելական համայնքներու միացեալ վարժարանները երկար չեն գործեր: 1923ին Քեսապ այցելող Սահակ կաթողիկոս Խապայեան կը յորդորէ «*չխզել Միութիւնը եւ հոգ փանիլ իրենց գաւակաց բարոք զարգացման*»<sup>37</sup>: Միացեալ դպրոցները, ինչպէս կ'երեւի, երկար կեանք չեն ունենար: Բաժանումին մէջ դեր ունէին գլխաւորաբար յարանաւանական շահերը: Այսուանդերձ՝ առաքելական-անտարանական միացեալ վարժարաններու տեսլականը կը փայլալոյսի շատերու կողմէ՝ «*շեշտելով կարեւորութիւնը լուսատրչական եւ բողոքական մանուկներուն փայլու միօրինակ սկզբունքներու վրայ հիմնուած կրթութեան մը, որպէսզի կարենան անոնք ապագային համերաշխութեամբ գործակցիլ իրարու հետ՝ յօգուր իրենց ազգային շահերուն*»<sup>38</sup>: Նոյնիսկ կ'առաջարկուի Հալէպի մէջ բանալ «նմոյշ դպրոց մը», ուր յարանաւանական հասար հողի վրայ ուսում ասանդով աշակերտներուն: Կրօնքի ուսումը ը-

լայ զուտ բրիտանական-բարոյագիտական, իսկ երկու յարանուանութիւններու սովորութիւնները համադրուին: Կը ծրագրուի պատրաստել յատուկ դասագիրք: 6000 տոլարի պիտոճէ կը նախատեսուի<sup>39</sup>:

1924ին կազմուեցաւ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութիւնը, կեդրոնը՝ Պէյրութ: Սուրիոյ մէջ գործող բոլոր աւետարանական վերաբացուած նախկին ու նոր վարժարանները կը մտնեն աւետարանական վարժարաններու ցանցին մէջ: Սուրիոյ մէջ առաջին եկեղեցին նկատուեցաւ Հալէպի Էմմանուէլ եկեղեցին, ուր կը նստէր Սուրիոյ հայ աւետարանականներու համայնքապետը<sup>40</sup>:

1920ականներուն կը վերակազմուին հայ կաթողիկէ համայնքներուն Հալէպի եւ Դամասկոսի թեմերը: Հայ կաթողիկէ համայնքի Ճեզիրէի եւ Եփրատի թեմը կը հիմնուի ուշ՝ 1938ին: Հայ կաթողիկէ վարժարանները օրէնքով կ'իյնան հայ կաթողիկէ ժողովրդապետութիւններու հսկողութեան տակ եւ կ'անուանուին հայ կաթողիկէ ժողովրդապետութեան վարժարաններ: Սակայն շատ վայրերու մէջ կաթողիկէ համայնքի վարժարանները դրուած են տարաբնոյթ գերատեսչութիւններու հսկողութեան տակ, այսպէս՝ արջկանգ վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են Անարատ Յղութեան Հայ Քերց Միաբանութեան (ԱՅՔՄ): Մանչերու վարժարանները, իսկ տեղ-տեղ երկսեռ վարժարանները յանձնուած են օտար առաքելութիւններու հսկողութեան՝ Ֆրանսացի յիսուսեան, ֆրանչիսկեան, լազարիստ, քափուցիւնեան վարդապետներու: Արաբախօս իր զանգուածներուն հայեցի դաստիարակութեան ու հայերէնի ուսուցման հարցով միշտ անելին ակնկալուած է կաթողիկէ դպրոցներէն<sup>41</sup>: Այդ հարցով բողոքներ ու ընդվզումներ եղած են համայնքին մէջ: 1946էն ետք օտար առաքելութիւններէն հայ կաթողիկէ վարժարանները անցան թեմական իշանութիւններու ամբողջական հսկողութեան տակ՝ պահելով միայն ԱՅՀՔՄ եւ Մխիթարեան Միաբանութեան կրթական գործունէութեան գերատեսչութիւնները:

Կը թուէր, թէ կրթական գործը երեք յարանուանութիւններու իրաւասութեան մէջ մտնելով իր քնական հունին մէջ կը մտնէր, բայց այդպէս չեղաւ, որովհետեւ սկիզբէն եւթ կրթական գործին մէջ իր վերահսկողութիւնը հաստատել ուզեց կուսակցական գործօնը: 1921ին հաստատուած Կիլիկեան Գաղթային Միութեան (ԿԳՄ) Կիլիկեան Վարժարանի շրջանակին մէջ ազգային վարժարաններու հետ միացման խնդիրը երկփեղկուած կ'առաջացնէ: Կիլիկեան Նպաստից Միութեան մէջ ծայր կ'առնէ ներքին սուր վէճ մը դպրոցի պատկանելիութեան շուրջ: Ոմանք կողմնակից էին դպրոցը կապելու ազգային առաջնորդարանին ու կոչելու Ազգային, իսկ ոմանք կը յամառէին զայն պահել առաջնորդարանէն անկախ հաստատութիւն: Կիլիկեան Նպաստից Միութեան մէջ գերակշիռ էին հնչակեանները, թէւ ոչ-բոլոր

հնչակեաններն էին այդ բաժանումին կողմնակից: Առաջնորդարանը կը պահանջէ դպրոցը կոչել Ազգային Կիլիկեան Վարժարան, այլապէս կը սպառնայ առաջնորդարանի շէնքերէն դուրս դնել դպրոցը: Դպրոցը վարձու շէնքեր անցնելով կը պահէ իր միութենական վարժարան ըլլալու հանգամանքը ու նոր մասնաճիւղեր կը բանայ հիւլալանին, Նոր Գիւղի եւ Էշրեֆիի մէջ<sup>42</sup>: Ան փաստօրէն կը վերածուի հնչակեան դպրոցի մը:

Միւս կողմէ թե՛ Ազգային եւ թե՛ Կիլիկեան վարժարաններէն դժգոհ տարրեր եւս կային Կիլիկեան Գաղթային Միութեան մէջ: Ասոնք «*Խառն դաստիարակութիւնը կը գտնէին անժամանակ, գերիսճողուն կարգերը կը գտնէին հակամանկավարժական, կուսակցական ուսուցիչներու կողմնակալ հայեացքները կը նկատէին ազգավնաս*»<sup>43</sup>: Ասոնք հեռանալով Կիլիկեան Միութենէն 1924ին կը հիմնեն Կրթասիրաց Միութիւնը, որն ալ իրականութիւն կը դարձնէ Կրթասիրաց Վարժարանը: Դամասկոսի մէջ Պահաս Սալիիէ թաղամասի Ազգային Թարգմանչաց Վարժարանի մանկապարտէզը նախակրթարանի վերածելու աշխատանքը երկփեղկումի կը տանի, կը ստեղծուի Ազգային Սահակեան Վարժարանը. ասկէ դժգոհ դաշնակցականներ 1929ին կը բանան ուրիշ վարժարան մը, իբրեւ բոլոր թաղեցիներու Միացեալ Վարժարանը «*առանց յարանոտանական խտրութեան*», ապա 1930ին՝ Պապ Թումայի մասնաճիւղը, որ 1951էն ետք կը կոչուի Զաւարեան Վարժարան<sup>44</sup>: Այսպէս՝ մինչեւ 1920ականներու վերջը կարգ մը միութենական վարժարաններ յստակ կերպով կը կուսակցականացուին, ինչպէս Հալէպի Կիլիկեան եւ անհատական Արմէնեան վարժարանները՝ հնչակեան, Քեսապի Ուսումնասիրաց միութեան Ուսումնասիրաց եւ Դամասկոսի Միացեալ ու Զաւարեան վարժարանները՝ Հալէպի Զաւարեան միութեան Զաւարեան վարժարանը՝ դաշնակցական:

Միւս կողմէ՝ կարգ մը միութենական վարժարաններ կը յաջողին անկախ մնալ, կուսակցական ազդեցութենէ հեռու. առաջինը Հալէպի Կրթասիրաց Միութեան Կրթասիրաց Վարժարանն է, որ կը ծրագրէ ոչ-հայրենակցական, ոչ-կուսակցական եւ ոչ-յարանոտանական հիմունքներով տանիլ ազգային, մշակութային եւ կրթական գործունէութիւն: Կը հետեւի ազգային վարժարաններու Ուսումնական խորհուրդի ծրագիրներուն<sup>45</sup>: երկրորդը Լեւոն Յ. Լեւոնեանի Ուսումնասիրաց Վարժարաններու ցանցն է: Ուսումնասիրաց միութիւնը Հալէպի մէջ սկզբնապէս այնթապցի աստարանականներու միութիւն է, որուն տէրն ու տիրականը կը դառնայ Լեւոն Յ. Լեւոնեան, 1925-ին: Միութիւնը կրթական, մշակութային ու մարդասիրական աշխատանքներ կը ծառայէ ոչ-յարանոտանական, ոչ-հայրենակցական եւ ոչ-կուսակցական սկզբունքներով<sup>46</sup>:

Ազգային վարժարաններուն մեծագոյն խնդիրը դպրոցի տարեկան պիտոճէի հայթայթումն էր: Հոգաբարձական կազմերը տեղւոյն թաղական խորհուրդներուն հետ պէտք է լուծէին դրամական հարցերը: Ձրիավարժ

աշակերտության թիվը չափազանց շատ էր, հոգաբարձուքինը ներքին ծեռնարկներով՝ Ամանորին, Ջատկուան ու դպրոցական տարեվերջին տրուած հանդէսներով, թատերական ներկայացումներով, ՀԲԸՄի նպաստներով, ու եթէ ենթահող ըլլար՝ հայրենակցական միութիւններու, այլ կազմակերպութիւններու, անհատ բարերարներու եւ պետական նպաստով կը ջանար պիտոճէն հասասարակշռել:

1932-34՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Բարգէն Ա. աթոռակից կաթողիկոսի հովուապետական այցելութիւնները առաքելական համայնքի կրթական գործը աւելի ամրապնդելու նպատակներ ալ կը հետապնդէին: Կաթողիկոսի միջնորդութեամբ պիտոճէական մեծ խնդիրներ ունեցող ազգային դպրոցները կը հրափրուին դրուելու ՀԲԸՄի տեղական մասնաճիւղերու խնամատարութեան տակ ու կը կոչուին ՀԲԸՄի Նպաստընկալ Ազգային Վարժարաններ: 1932ին մեծ թափ կ'առնէր շրջաններու մէջ Միութեան մասնաճիւղերու բացումը: Նիւթական ուրիշ աղբիւր չունեցող ազգային վարժարանները կը դրուին ՀԲԸՄ տեղական մասնաճիւղերու ամբողջական խնամակալութեան տակ: Անոնք իրենց վրայ կ'առնեն դպրոցի ելեմուտքին պատասխանատուութիւնը: Պէտք է նշել սակայն, որ ՀԲԸՄը նպաստ կը յատկացնէ ոչ միայն տեղական մասնաճիւղերուն հոգատարութեան յանձնուած, այլ ընդհանրապէս՝ ամենտարանական, ազգային, միութեանական եւ կաթողիկէ ժողովրդապետութիւններու պատկանող դպրոցներուն: Աւետարանական եւ կաթողիկէ վարժարանները նպաստատու արտաքին աղբիւրներ ալ ունէին: Շատ ու շատ ազգային դպրոցներ, յատկապէս գիւղական շրջանակներու մէջ, միշտ նիւթական բաց կ'ունենային: Վիճակագրութիւն մը կը յայտնէ, որ 1936-37 կրթաշրջանին ՀԲԸՄը Սուրիոյ մէջ 68 դպրոց կը հովանաւորէր. «Ասոնցմէ զաւր կան նաեւ Բարեգործականէ նպաստը չստացող կարգ մը վարժարաններ»<sup>47</sup>:

Կարգ մը դպրոցներ ՀԲԸՄէն նպաստ ընդունելով հանդերձ չեն մտներ Նպաստընկալ Վարժարաններու ցանցին մէջ, այսինքն չեն ղեկավարուիր Միութեան տեղական մասնաճիւղերու կողմէ, այլ կապուած կը մնան եկեղեցիներու թաղականութեան եւ անկէ բխած հոգաբարձական կազմերու, որովհետեւ այնտեղ ընտրողներու մեծամասնութիւնը մէկ կողմի մարդիկ էին: Այսինքն՝ այդ ազգային վարժարանները միով բանիւ կա՛մ հնչակեան, կա՛մ դաշնակցական օղակի մէջ էին, որքան ալ ազգային իշխանութիւնները զգուշացնէին դպրոցները կուսակցականացնելու միտումներ:

1936-1937 կրթաշրջանին ՀԲԸՄը Սուրիոյ մէջ 68 եւ Լիբանանի մէջ՝ 26, համագումար՝ 94 վարժարան կը հովանաւորէր<sup>48</sup>:

ՀԲԸՄի տեղական մասնաճիւղերու նպաստընկալ ազգային վարժարաններու կարգավիճակը ընդվզում կ'առաջացնէ դաշնակցական շրջանակներու մէջ՝ զայն նկատելով հակասահմանադրական եւ

Միութեան ուղղակի միջամտութիւնը ազգային վարժարաններու գործին: Սակայն Նպաստընկալ Վարժարաններու կարգադրութիւնը անլի սուր կերպարանք կու տայ գաղափարական-կուսակցական հակամարտութիւններուն, որով կուսախնձոր կը դառնան եկեղեցին եւ դպրոցը, որովհետեւ սփիւտքեան պայմաններուն մէջ միայն ասոնցմով կարելի է զանգուածը կուսակցական հովանիին տակ առնել, ուղղորդել ու շահագործել, անոնցմով մեծնալ: Միջկուսակցական պայքարը ազգային եւ միութենական շրջանակներու մէջ կ'արտայայտուէր տեղական իշխանութիւնները (թաղական խորհուրդ ու հոգաբարձական կազմ) ձեռք ձգելու աշխատանքով, իսկ անտարանական եւ կաթողիկէ համայնքներուն մէջ՝ ազգայնական քարոզչութեամբ, կրթութիւնն ու դպրոցը յարանուանական հովանիէն դուրս բերելու, ազգային դաստիարակութեան անլի տեղ տալու պահանջներով, որովհետեւ դեռ նախաեղեռնեան տարիներուն գաւառներու մէջ անտարանական եւ լատին-կաթողիկէ դպրոցներուն հանդէպ սուր ընդդիմութիւն մը կը ստեղծուի ի նպաստ ազգային վարժարաններուն: Այդ ընդդիմութեան գլխաւոր պատճառներէն մէկը անշուշտ օտար առաքելութիւններու գերատեսչական ծանր ներկայութիւնն էր անտարանական եւ կաթողիկէ դպրոցներուն վրայ, երկրորդ, իրենց ընկալմամբ, ազգային դաստիարակութեան եւ հայերէնի ստորադասումը օտար լեզուներու եւ ընդհանուր գիտութիւններու դիմաց: Ահա թէ ի՞նչ կ'ըսէ Քեսապի Ազգային Սահակեան Վարժարանի տնօրէն Մանուկ Գոյումճեան 1912ի շրջանաւարտութեան հանդէպին.

Կիլիկիոյ զանազան վայրերուն մէջ գտնուող օտար կրթական հաստատութիւններ, որոնք այնքան շքեմ ասպնջականութիւն ցոյց կու տան մեր զաւակներուն, որոշ չսփով մը պատճառ չեն եղած մեր ազգային նկարագրին խորթացումին: ... Հաստատութիւնները օտար, հաստատութեան վարիչները օտար, պաշտօնական լեզուն օտար. միթէ հնար է հոն դաստիարակուող տղան չօտարանայ իր զգացումներով: Եւ միթէ կ'արժէ՞ քանի մը գիտութիւններու եւ լեզուներու սիրուն համար մոռնալ կամ նոյնիսկ ուրանալ մեր ազգային թանկագին աստղները, որոնց է՛ն վերի կողմը կը մնայ լեզուն: Կարծես տան ու դպրոցին մէջ դասադիր դաշնակցութիւն մը կայ, որով մայրը օրօրոցի մօտ, ուսուցիչը գրասեղանին քով՝ մասնաւոր ջանք մը ունին տղուն ներշնչելու օտար զգացումներ, օտար բարբառներ եւ օտար սովորութիւններ<sup>63</sup>:

Նոր գաղութին մէջ նոյն վերաբերմունքը կը շարունակուի հայ անտարանական եւ կաթողիկէ վարժարաններուն նկատմամբ, ուր գլխաւորաբար կրթաթոշակի վճարման դիւրութիւններ գտնելով՝ մեծամասնաբար կը յաճախէին առաքելական ընտանիքներու դպրոցականներ: Այդ դպրոցները օտար կը նկատուէին, որովհետեւ անոնց վրայ կը շարունակէր զգալի մնալ օտար առաքելութիւններու գերատեսչութիւնը, թէեւ փաստ է, որ մանաւանդ անտարանական բոլոր եւ կաթողիկէ կարգ մը վարժարաններուն մէջ հետզհետէ անլի հիմնաւոր

կը դառնար հայերէնի եւ հայերէնագիտական նիւթերու ուսուցումը: Հալէպի Նոր Գիւղի Ազգային Սահակեան Վարժարանի հոգաբարձութիւնը թաղեցի 50 ազգայիններու հետ 19 Մայիս 1934ին կատարուած հանդիպումի մասին այսպէս կ'արձանագրէ. «*Մտադարձակ ժողովուրդին մեծամասնութիւնը արհեստաւոր ու չքաւոր դասակարգերէ բաղկացած ըլլալուն՝ աշակերտութիւնը իր թոշակները լրի վճարելու հնարատրութիւն չի ներկայացներ, այս պատճառով շարքեր կը փարտուին օտար վարժարաններ, որոնք մեր ապագայ սերունդը խաթարելէ զար ոչինչ ունին շինիչ: Այս մասին պէտք է լուրջ միջոցներ ձեռք առնել*»<sup>50</sup>:

Դաշնակցութեան կողմէ «Ռչ-յարանուանական» պիտակումով անկախ դպրոց հիմնելու քայլերը 1932ին ետք կը դառնան ընդհանուր երեսոյթ կարգ մը վայրերու մէջ՝ մասնաւորաբար անտարանական եւ ազգային վարժարաններու շրջանակին մէջ:

ՀԲԸՄի նպաստընկալ ազգային վարժարաններու՝ միութեան տեղական մասնաճիւղերու հովանաւորութեան տակ դրուած ըլլալու կարգավիճակը ընդվզում կ'առաջացնէ դաշնակցական շրջանակներու մէջ՝ զայն նկատելով հակասահմանադրական եւ Միութեան ուղղակի միջամտութիւնը ազգային վարժարաններու գործին, որովհետեւ դպրոցի պիտոճէն եւ ուսուցիչներու ընտրութիւնը ամբողջապէս կը դրուէր միութեան տնօրինութեան տակ,<sup>51</sup> բայց կար նաեւ այլ պարագայ մը, միութեան տեղական մասնաճիւղերուն մէջ տիրապետող էին հնչակեան եւ կամ ռամկավար կուսակցութեան տարրերը: Միւս կողմէ՝ ընդհանրապէս դաշնակցական արեւելումով ազգայնական շարժում մը ծայր կ'առնէ նաեւ անտարանական համայնքէն ներս՝ կրթութիւնը եկեղեցոյ հովանիէն դուրս դնելու եւ ազգային դաստիարակութիւն ապահովելու պատճառաբանութեամբ<sup>52</sup>: Այս շարժումը կը տանի բաժանումի: Կը ստեղծուի դաշնակցութեան հովանաւորութիւնը վայելող ոչ-յարանուանական դպրոցներու նոր ցանց մը՝ մեծ մասով Միացեալ վարժարան անունով: այս դպրոցներուն նիւթական նեցուկ հայթայթելու համար գրեթէ բոլոր բնակավայրերուն մէջ կը կազմուին Սուրիահայ Օգնութեան Խաչի մասնաճիւղեր<sup>53</sup>: Միւս կողմէ հոս ու հոն՝ դաշնակցական կողմնակիցներու ձեռքը անցած ազգային վարժարաններէն բաժնուողներ կը կազմէին ՀԲԸՄի նոր մասնաճիւղեր, որոնք նոր նպաստընկալ ազգ. վարժարաններ կամ նպաստընկալ ազգ. վարժարաններու մասնաճիւղեր կը բանային: Այնպէս կը պատահի, որ փոքրիկ բնակավայրեր քանի մը տասնեակ աշակերտութիւն ունեցող յարանուանական մինչեւ երեք վարժարաններու կողքին կ'ունենան չորրորդ մըն ալ. այսպէս՝ 1931ին Լաթաքիոյ Ազգ. Վարժարանէն կ'անջատուի Հայկազեան Վարժարանը, 1933-1934ին Քեսապի եւ Քէօրքիւնէի անտարանական վարժարաններէն կ'անջատուին մէկական Միացեալ վարժարան, Գարատուրանի Ազգային Մեսրոպեան

Վարժարանն՝ այլ Միացեալ մը, Տուգադաճի ազգային վարժարանն՝ ՀԲԸՄի նպաստընկալ վարժարանը, 1936ին Այն Արուսի Ազգ. Նպաստընկալ Նոպարեան վարժարանն՝ Խորէնեան վարժարանը, Տէր Զօրի Ազգ. Հռիփսիմեանց վարժարանն՝ Վարդանեան վարժարանը, անելի ուշ՝ Արաբ Փունարի ազգային վարժարանն՝ ՀԲԸՄի նպաստընկալ վարժարանը, Տրպեսիէի Ազգ. Կիլիկեան վարժարանն՝ նպաստընկալ Կիլիկեան վարժարանը... եւ այսպէս շարունակ:

Ասիկա 1920-40ականներու պատկերն է սուրիահայ դպրոցին:

Ատիկա կը նկատեն նաեւ ֆրանսական իշխանութիւնները ու առարկութիւններ կ'ընեն նոր դպրոց հիմնելու ատեն. «Հայք քաղաքականութեամբ կը զրաղին, նոյնիսկ դպրոցներէն կը սկսին զբաղիլ» կ'առարկէ շրջանի ֆրանսացի իշխանատըրը Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ արք. Տոհմունիին՝ Սուււրայի մէջ հայկական դպրոց բանալու առնչութեամբ<sup>54</sup>: Դամասկոս այցելող Սահակ Բ. կաթողիկոս հարկ կը զգայ պաշտօնապէս հերքելու այս ամբաստանութիւնը՝ ֆրանսացի պարտութիւնի Լաասթրին, հաստատելով որ «Մեր ժողովուրդին փոքրիկները իրաւունք ունին սորվելու իրենց մայրենի լեզուն, իրենց մայրենի եկեղեցւոյ կրօնքը՝ ո՛ր որ ալ գտնուին»<sup>55</sup>:

Կաթողիկոսին յայտնի էին հայ ներքին կեանքին բոլոր պատակտունները, արդէն հասկցած պէտք է ըլլար, որ Սփիւռքի մէջ կուսակցութիւններու գոյութեան հիմքը դպրոցն է, ոչ միայն նորագիտներու բանակ ձեռք բերելու, այլեւ իրենց կամքն ու համոզումները պարտադրելու համար ազգային իշխանութիւններուն եւ ժողովուրդին: Դպրոցները, ազգային թէ միութեանական, տակաւ կը մտնէին Դաշնակցութեան, Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւններու ազդեցութիւններու գօտիէն ներս: Նոյնը կը պատահէր նաեւ մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններուն, բան մը որմէ խուսափում չկար այլեւս:

Ամեն պարագայի՝ ազգային վարժարաններու հսկայ ցանցը կուսակցականացումէ չի յաջողիր զերծ մնալ: Այդ տարիներուն Սուրիոյ եւ Լիբանանի հայ կրթական կեանքը ուսումնասիրողներէն մէկը նկատի ունենալով Դաշնակցութիւն, Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւններու միջամտութիւնը կրթական գործին մէջ՝ կը գրէ. «Առնուազն պէտք է յիշատակել, որ իտաքանչիւր կուսակցութիւն լուրջ ջանքեր կը թափէ մրցակցելով միւս կուսակցութիւններուն եւ Հայ եկեղեցւոյ հետ, կտառավարելու համար հայ կեանքն ու կրթութիւնը իր ղեկավարներուն եւ ուսուցիչներուն միջոցով եւ հետեւաբար նոր սերունդները դաստիարակելու իր քաղաքական, ընկերային եւ բարոյական սկզբունքներով»<sup>56</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Հնչակեան Կուսակցութեան շրջանին մէջ տարածման մասին մեր հիմնական աղբիւրն է Աղասի, Մոռցուած Հերոսներ, Ա. Հարոյր, Տպ. Արարատ, 1952. Նան՝

Պօղոս Մատուռեան, «Ազատութեան Ճանապարհին Վրայ», Մարտիրոս Գուշագեան եւ Պօղոս Մատուռեան, *Յուշամատեն Մուսա Լեւրան*, Պէյրութ, 1970, տպարան Ատլաս, էջ 277. նաեւ՝ Թովմաս Հապէշեան, *Մուսա-Տաղի Պապենական Արծազանգներ*, Պէյրութ, Հրատ. Էրեբունի, 1986, էջ 163. նաեւ՝ Vahram L. Shemmassian, "Armenian Musa Dagh in the Nineteenth and Early Twentieth Century," in *Armenian Communities of the Northeastern Mediterranean, Musa Gagh – Dort Yol, Kessab*, editor՝ Richard G. Hovhannisian, California, 2016, էջ 104-112. նաեւ՝ Ալպէո Ա. Թէմիրեան, *Քեսապ (1909-1946)*, Պէյրութ, Տպարան Տօնիկեան, 1956, էջ 135-66. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հարոր*, Հրատ.՝ Համազգայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան, Հալէպ, տպարան Արեւելք, 1995, էջ 80-89. նաեւ՝ Տոքթ. Եղիկ Ճերէճեան, «Նիւթեր Ա. Դ. Հ. Կ. Հալէպի Շրջանի Պատմութեան Համար (1889-1925)

[http://www.araraddaily.com/DailyNews-](http://www.araraddaily.com/DailyNews-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80-Lebanese-Political-News/7787/article/30/Lebanese-Armenian-News/)

[%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80-Lebanese-Political-News/7787/article/30/Lebanese-Armenian-News/](http://www.araraddaily.com/DailyNews-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%A5%D6%80-Lebanese-Political-News/7787/article/30/Lebanese-Armenian-News/):

- <sup>2</sup> Օրինակ՝ 1908ին Գարատուրան գիւղի Հայ Անտ. Եկեղեցոյ հիմնարկէին Տ. Պետրոս Քինյ. Փափուճեանի հետ աշխատանքով, նոյնազով ու ներկայութեամբ կը մասնակցին առաքելականները եւ: Վեր. Տիգրան Գումտաքեան եկեղեցին կը կոչէ Քրիստոսի եկեղեցի եւ կ'ըսէ . «Ան բոլոր համայնքներուն համար պաշտամունքի վայր պիտի դառնայ» (Մարիամ Սարամազեան-Չիփրեան, «Ինքնակենսագրութիւն»՝ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ, Գ. Հարոր*, Հրատ.՝ Ամերիկարեակ Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութեան, Հալէպ, Տպարան Արեւելք, 2004, էջ 209):
- <sup>3</sup> Աղասի իբրեւ հնչակեան հաատատոր եկեղեցականներ կը յիշատակէ շարք մը անուններ Անտիոքի եւ Ալեքսանտրէի շրջաններէն: Օրինակ՝ մեն գովեստով կը խօսի Գարատուրան գիւղի Ա. Աստուածածին եկեղեցոյ Տ. Պետրոս Քինյ. Փափուճեանի, Քեսապի կաթողիկէ համայնքի հովիւ Նիկողայոս Վրդ. Պէժճեանի մասին (Աղասի. *Մոռցած Հերոսներ, Ա. Հարոր*, էջ 209-210):
- <sup>4</sup> Գէորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Այնթապի Հայոց, Ա. Հարոր*, Սենթրըլ Թայփսերիս, Լոս Անճելըս, 1953, էջ 937:
- <sup>5</sup> Shemmassian, էջ 104-112. նաեւ՝ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հարոր*, էջ 86:
- <sup>6</sup> Միայն Քեսապէն Հալէպ կը տարօրին տասը երեւելիներ եւ «շատ ուրիշներ» (Թէմիրեան, էջ 89):
- <sup>7</sup> Բերիոյ Թեմի Ազգ. Առաջնորդարան (ԲԹԱԱ), Ստացուած Նամակներու ծրար, նամակ՝ Եագուպիէ, 7 Մայիս 1907 թուակիր:
- <sup>8</sup> Թէմիրեան, էջ 89. նաեւ՝ Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հար.*, էջ 86:
- <sup>9</sup> Չոլաքեան, *Քեսապ, Ա. Հար.*, էջ 89:
- <sup>10</sup> ԲԹԱԱ, Հոգաբարձութեան Ատենագրութեան Տոմար, Նիստ 13 Յունուար 1910:
- <sup>11</sup> ԲԹԱԱ, *Ներսէսեան Ուսումնարանի Հոգաբարձութեան Առաքած Նամակներու Պատճեններու Թիւ 12 Տոմար*, նամակ 127, 20 Օգոստոս 1911 թուակիր:
- <sup>12</sup> Նոյն, 21 Օգոստոս 1911 թուակիր նամակ:
- <sup>13</sup> ԲԹԱԱ, Ստացուած Նամակներու Ծրար, նամակ՝ համար 558, 16 Յուլիս 1920 թուակիր:

- <sup>14</sup> Նոյն, Նամակ՝ համար 271, Հալեպ, 28 Մայիս 1921 թուակիր:
- <sup>15</sup> *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, տես վաերագիր թի 39, էջ 550:
- <sup>16</sup> «Հալեպի Դեպքը (Մեր Մասնատր Թղթակիցին)», *Կիլիկիա*, Ատանա, Ա տարի, թի 5, 12 Մարտ 1919, էջ 2. նաև՝ Եղիա Նաջարեան, «Հայ-Արաբական Փոխարարերու Գործունեությունները Սիրիայում (1918 Հոկտեմբեր – 1919 Յունիս)», *Մերձարտ եւ Միջին Արևելքի Երկրներ եւ Ժողովուրդներ*, Հտր. 6, Երեան, ՀԱՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 154. նաև՝ Յակոբ Սերոբեան, Եղեռնի Յուշերս, Հրատ.՝ Աղորանիկ Տագեան, Պէրոյթ, Ֆոթոկրափոլ Բազմայեան, 2005, էջ 193-99:
- <sup>17</sup> Օ. Հոզեկ, «Հալեպի Կոտորածը (Սեփական Թղթակցություն)», *Կիլիկիա*, թի 6, 14 Մարտ 1919:
- <sup>18</sup> Յովհաննէս Խ. Թովուզեան, *Սիրիայի եւ Լիբանանի Հայկական Գաղթածականների Պատմություն (1841-1946)*, Երեան, էջ 215:
- <sup>19</sup> «Մենք Ինչ Կը Խորհիմք – Դարձեալ Կոտորած», *Կիլիկիա*, 14 Մարտ 1919:
- <sup>20</sup> Այս մասին տե՛ս՝ Մովսէս Շահպազեան, *Հայ Կամաւորական Շարժումը Առաջին Աշխարհամարտին (1917-1920)*, Սուրիա-Քեսապ, 1965, էջ 32:
- <sup>21</sup> Չոլաքեան, *Քեսապ*, Ա. հատոր, էջ 112-118:
- <sup>22</sup> Խմբագրական, «Դամասկոսի Արջին Դեպքը», *Նոր Փրնիկ*, Պէրոյթ, 21 Հոկտեմբեր 1925: Նիպեր ունին *Սուրիահայ Մամուլ*, 25 Հոկտեմբեր 1925, թի 482. նաև՝ «Երկու Կարևոր Փաստաթուղթեր», *Սուրիահայ Մամուլ*, 20 Յունուար 1926, թի 516:
- <sup>23</sup> Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրիահայ Մամուլ*, 25 Նոյեմբեր 1925, էջ 3:
- <sup>24</sup> Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ, «Կարմիր Կիւրակէ», *Սուրիահայ Մամուլ*, 22 Նոյեմբեր, 1925, էջ 1ա:
- <sup>25</sup> Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրիահայ Մամուլ*, 1 Յունուար 1926, էջ 1:
- <sup>26</sup> Մ. Մ. Մարտունի, «Դամասկոսի Ներկայ Կեանքէն», *Սուրիահայ Մամուլ*, 25 Նոյեմբեր 1925, էջ 3:
- <sup>27</sup> Նոյն:
- <sup>28</sup> Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարան, «Տեղեկագիր Միջգաւատական Հ. Միութեան, 1 Փետրուար 1919-էն մինչեւ 30 Յունուար 1923»:
- <sup>29</sup> Թովուզեան, էջ 162:
- <sup>30</sup> Քեսապի եւ Սուեիոյ «Իսկա-դաշնակ» եւ «դաշնակ» զոհերու անուանացանկը տե՛ս՝ Թեմիւրեան, էջ 133 եւ 134. նաև՝ Vahram L. Shemmassian, *The Musa Dagh Armenians: A Socioeconomic and Cultural History 1919-1939*, Beirut 2015, էջ 77-79:
- <sup>31</sup> *Վաերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան*, Գիրք Դ., Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս Կիլիկիոյ (1891-1940թթ.), կազմեց Սանտրո Բեհրուդեան, Երեան, Ոսկան Երեանցի Հրատ. 1997, էջ 335:
- <sup>32</sup> Նոյնը, էջ 379-380:
- <sup>33</sup> Քեսապի Ազգային Միութեան եւ Զինուորական Իշխանութեան կազմերուն ու զործունէութեան մասին տե՛ս՝ Չոլաքեան, *Քեսապ*, Ա. Հատոր, էջ 115-122:

- <sup>34</sup> Շահպազեան, էջ 35:
- <sup>35</sup> «Կրթական Վիճակացոյց Հալեպի Առաջնորդական Թեմին, 1927-1928 Շրջան», *Տաթևու Կրօնական Տարեցոյց, Ե. գիրք*, 1929, Հալեպ, էջ 388:
- <sup>36</sup> Սուրիոյ հայ առաքելական եկեղեցւոյ թեմական կարգավիճակին համար տե՛ս՝ Վարդան Եպս. Տէմիրճեան, *Գասազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ Հայոց Թեմերու Առաջնորդութեան, Ա. Հատոր*, Անթիլիաս-Լիբանան, 1980:
- <sup>37</sup> «Տեղեկութիւններ Սուրիոյ Հայ Գաղթականութեան Մասին», *Հայաստանի Կոչնակ*, 17 Նոյեմբեր 1923, էջ 1459ա:
- <sup>38</sup> Գէորգ Ասրաֆեան, *Պարմութիւն Անթեպի Հայոց, Բ. հատոր*, Լոս Անճելոս, Սենթրըլ Թայփսեթինկ, 1953, էջ 523:
- <sup>39</sup> Նոյն, էջ 526:
- <sup>40</sup> Սուրիոյ հայ անտարանական համայնքներու պատմութեան անդրադարձած են հայ անտարանական շարժման բոլոր գլխաւոր պատմիչները ու լայնօրէն քննած կրթական գործը՝ Տիգրան Ճ. Խլորբեան, *Ոսկեմարտեան Հայ Անտարանական Միութեան, Ա. հատոր*, Պէյրութ, տպարան Շնորհոքեան եւ Ա. Տէր Սահակեան, 1950. նաե՛ս՝ Վեր. Եղիա Քասունի, *Լուսաշարիչ Պարմութեան Հայ Անտարանական Շարժման, Պէյրութ, Մերձ. Արեւելքի Հայ Անտ. Ընկ.*, 1947. նաե՛ս՝ Վեր. Կարապետ Ատանալեան, *Յուշարձան Հայ Անտարանականաց եւ Անտարանական Եկեղեցւոյ*, Ֆրեզնօ, Crown printing company, 1952:
- <sup>41</sup> Դոկտ. Յակոբ Թօփեճեան, «Հայութիւնը Սիւրիոյ Մէջ», *Հայաստանի Կոչնակ*, 14 Յուլիս 1928, էջ 874բ:
- <sup>42</sup> Տե՛ս՝ Խնամակալութիւն Կիլիկեան Ճեմարանի, «Կիլիկեան Ճեմարանը երեկ եւ Այսօր, 1921-1975, Հալեպ», 10 մեքենագիր մեծադիր էջ:
- <sup>43</sup> Գրիգոր Պողարեան, «Ինչո՞ւ եւ Ինչպէ՞ս Հիմնուեցաւ Այնթապցիներու «Կրթասիրոց Վարժարան»ը Հալեպի Մէջ», *Հայ Անթեպ*, 1970, թիւ 41, էջ 16:
- <sup>44</sup> *Դամասկոսի Միացեալ վարժարանի Քսանհինգամեայ Յօրելեան (1929-1954)*, Հալեպ, տպարան Արեւելք, 1956:
- <sup>45</sup> Պողարեան, «Ինչո՞ւ եւ Ինչպէ՞ս», էջ 16:
- <sup>46</sup> Միութեան ու անոր դպրոցական ցանցին մասին տե՛ս՝ Սիրելի եւ Ծառայելի (Լեւոն Յ. Լեւոնեան, *Մշակը եւ Իր Հունձը*), խմբ.՝ Լեւոն Վարդան, Պէյրութ, տպարան Սեան, 1960, 112 էջ:
- <sup>47</sup> Գր. Հ. Գալուստեան, «Կրթական Գործը Սփիւռքի Մէջ եւ Մեր Կրթական Բարձրագոյն Հաստատութիւնները», *Հայաստանի Կոչնակ*, 11 Մարտ 1939, էջ 231:
- <sup>48</sup> Նոյն:
- <sup>49</sup> Մանուկ Գոյումճեան, *Ազալր Բեմի Խօսքեր*, Կ. Պոլիս, 1912, էջ 32-36:
- <sup>50</sup> Յակոբ Չոլաքեան, *Ութսուտամեակ Հալեպի Ազգային Սահակեան Վարժարանի, 1927-2007*, Հալեպ, 2007, էջ 80:
- <sup>51</sup> Անի Ֆիշենկեճեան, Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970), Երեւան, 2018, էջ 271:
- <sup>52</sup> 1930ականներուն այս շարժումը մեծ իրարանցում կը ստեղծէ Քեսապի շրջանի հայ անտարանական համայնքներուն մէջ: Պառակտումներ տեղի կ'ունենան՝ կրթական գործի բաժանում եւ մայր համայնքին վերադառնալու այլիք («Ազգայնական Շարժումը Քեսապի Հայ Անտարանական Համայնքին Մէջ», Չոլաքեան, *Քեսապ*, Գ. Հատոր, էջ. 411-461 ուր մէկտեղուած են Քեսապի հոգեւոր հովիւներ

---

րու՝ Ասատուր Աստաքեանի, Եղիա Քասունիի, Յակոբ Շնորհոբեանի, Տիգրան Անդրէասեանի, Ա. Ս. Մանուկեանի, Հայկի Շրջանային Վարչութեան, Քեսապի եւ Քէօրքիւնի եկեղեցիներու հոգաբարձութիւններու եւ խնամակալութիւններու, ամերիկացի միսիոնարներու եւ այլոց նամակները այդ խնդիրներու մասին):

<sup>53</sup> 1929-1935՝ Օգնութեան Խաչ Միութեան Սուրիոյ մասնաճիւղերուն թիւը կը հասնի 22ի, որոնք կը նպաստեն 1929էն իվեր անկախաբար գործող Միացեալ, դաշնակցական արեւելումով միութենական եւ ազգային որոշ վարժարաններու:

<sup>54</sup> «Դամասկոսի Թեմի Գործերը», *Հասկ Ամսագիր*, Հոկտեմբեր 1934, էջ 82բ:

<sup>55</sup> Եղյն, էջ 82բ:

<sup>56</sup> J. A. Babikian, *Civilization and Education in Syria and Lebanon, Historical, Comparative and Critical Survey of the Civilization and Various Educational Systems in Several Syrian and Lebanese Territories*, Beirut, Lebanon, Syria, 1936, p. 169: Թարգմանութիւնը մերն է:

#### THE PARTY POLITICISATION OF THE SYRIAN-ARMENIAN EDUCATIONAL EFFORT FROM ITS BEGINNINGS TILL 1946

(Summary)

HAGOP CHOLAKIAN

hagopcholakian@hotmail.com

The article focuses on the Syrian-Armenian school network as a case study, and describes the attempts to infiltrate partisan propaganda into Syrian-Armenian schools. The author notes that such attempts had become obvious as of the 1890s. Armenian parties' presence in the schools increased particularly after the restoration of the Ottoman constitution, when Henchag and Tashnag party propaganda efforts opposed each other in the school milieu. The school boards reacted strongly against this infiltration and tried to keep education separate from party influences. Interparty conflicts grew further after the armistice, during the formation of the post-Genocide Syrian-Armenian community, when Armenian schools start forming Orthodox, Catholic and Evangelical as well as societal networks. First, both parties controlled the union-owned schools and established an influential presence in certain community schools. The Tashnag camp succeeded in dividing certain Evangelical and Orthodox schools, under the call of "no to denominational discrimination" and established a network of united schools.

The conflict further intensified when a number of Orthodox-run schools joined the network of schools sponsored by the AGBU and were supervised by local AGBU chapters. These chapters gradually came under the influence of the Henchag and, to a larger extent, the Ramgavar parties. Foreign missionary schools, however, maintained a distance from party interference in their school network. The French authorities expressed distress concerning party infiltration and interparty conflict in education. As a result of these developments Armenian educational space was gradually divided into three spheres of party influence and very few maintained their independence. This situation persisted until the 1946 repatriation.